

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում փորձագետ ներգրավելու մասին

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի փորձագետ

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1) մասնակցել Նախարարության իրավական շահերի պաշտպանությանը դատական բոլոր ատյաններում.

2) մասնակցել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան վարչական վարույթի իրականացման աշխատանքներին.

3) մասնակցել Նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում օրենսդրական դաշտի կատարելագործման և բարեփոխման աշխատանքներին.

4) մասնակցել Նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում կնքվող միջազգային համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքներին.

5) մասնակցել Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված պայմանագրերի նախագծերի վերաբերյալ՝ իրավական նորմերի ապահովման մասով կարծիքների տրամադրման աշխատանքներին:

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝** Մինչև մեկ տարի:

**Փորձագետի պարտականությունները՝**

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

**Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

1) միջնակարգ կրթություն.

2) իրավունքի բնագավառում՝ առնվազն երեք ամսվա աշխատանքային փորձ.

3) ոլորտը կարգավորող օրենսդրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- 4) իրավական ակտերի մշակման փորցառություն.
- 5) համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն.
- 6) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- 7) Ռուսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 03.02.2020թ.**

**Աշխատանքի վայրը՝** ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3  
**հեռ. 010-511-355, 010-511-357, Էլ. հասցե՝** <http://mtad.am>

**Չի թույլատրվում** հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կհառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

### **Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարությունը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ վկայականի /ների/, աշխատանքային փորձի մասին վկայող փաստաթղթի (հրաման, տեղեկանք, հավաստագիր) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: